**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 17.05.2019թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ՍՑ-LO-2019/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ. թիվ 26-1/6457-2019 գրությամբ «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 18.02.2019թ. թիվ ԱԳ/ԿԲ/2132-19 և 14.03.2019թ. թիվ ԱԳ/ԿԲ/3738-19 գրությունների հիման վրա, 17.04.2019թ. «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

**2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 18.02.2019թ. թիվ ԱԳ/ԿԲ/2132-19 և 14.03.2019թ. թիվ ԱԳ/ԿԲ/3738-19 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«Տեղեկացնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի 95-րդ չափաբաժնի («Ձեթ») մասով ընտրված մասնակից «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենդրությամբ սահմանված ժամկետում չի ստորագրել համակարգի կողմից գեներացված գնման պայմանագրի նախագիծը, դրա փոխարեն ուղարկելով հետևյալ հաղորդագրությունը. «Հարգելի պատվիրատու հաշվի առնելով տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը տեղեկացնում եմ Ձեզ որ պայմանագիրը մեր ընկերության կողմից չի ստորագրվում»: Վերոնշյալ ընկերությունից բանավոր պարզաբանել են, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված է բարձր տեսակի ձեթ, մինչդեռ իրենք կարող են մատակարարել միայն 1-ին կարգի ձեթ: Որակավորման փուլում «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով նախատեսված է բարձր տեսակի ձեթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովի անդամները «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել են բավարար, ներկա պահին վերջինիս հայտը մերժելու տեխնիկական հնարավորությունը բացակայում է: Խնդրում եմ հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը տալ ծրագրային կարգավորում, որի արդյունքում հնարավոր կլինի վերոնշյալ գնման ընթացակարգի 95-րդ չափաբաժնի մասով «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ հայտը մերժել:*

*Միևնույն ժամանակ, հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ նախաձեռնել «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու գործընթաց:*

*Ի լրումն մեր 18.02.2019թ. թիվ ԱԳ/ԿԲ/2132-19 գրության Ձեզ ենք տրամադրում «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Թրեյդ-*

*Իմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, գնահատող հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունների պատճենները, պետական եկամուտների կոմիտեին ուղղված հարցման և ստացված պատասխանի, ինչպես նաև գնման ընթացակարգին վերաբերող այլ փաստաթղթեր:*»:

**3. <u>«Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 22.04.2019թ. գրությամբ դիմել է «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ. թիվ 26-1/6457-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է նիստերի օրվա ժամի և վայրի մասին, սակայն ընկերություն կողմից որևէ անձ չի ներկայացել նիստերին:

**4. <u>ՍՑ-LO-2019/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտարարել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.12.2018թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 95-րդ չափաբաժնի («Ձեթ») 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ին:

«Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենդրությամբ սահմանված ժամկետում չի ստորագրել համակարգի կողմից գեներացված գնման պայմանագրի նախագիծը, դրա փոխարեն ուղարկելով հաղորդագրություն առ այն, որ՝ *«Հարգելի պատվիրատու հաշվի առնելով տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը տեղեկացնում եմ Ձեզ որ պայմանագիրը մեր ընկերության կողմից չի ստորագրվում»*:

Հանձնաժողովի 22.01.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով ընթացակարգի 95-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ստորագրել իրեն տրամադրված գնման պայմանագրի նախագիծը, գնահատող հանձնաժողովը որոշել է Ընկերության զրկել «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով գնման ընթացակարգի մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ. թիվ 26-1/6457-2019 գրությամբ «Թրեյդ Իմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

-1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի

ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտարարել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-Շ» ծածկագրով «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Թրեյդ Իմպ» ՍՊԸ-ն և Հանձնաժողովի որոշման հիման վրա 95-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Սակայն Ընկերությունը գնումների մասին ՀՀ օրենդրությամբ սահմանված ժամկետում չի ստորագրել համակարգի կողմից գեներացված գնման պայմանագրի նախագիծը, դրա փոխարեն ուղարկելով հաղորդագրություն, այն մասին, որ պայմանագիրը ընկերության կողմից չի ստորագրվելու՝ հաշվի առնելով տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Թրեյդ Իմպ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու դեպքը դիտարկվում է որպես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.04.2019թ. թիվ 26-1/6457-2019 գրությամբ «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Թրեյդ-Իմպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

**ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**